Հավելված N
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) խաղային գործի վարչության (այսուհետ՝ Վարչություն) Խաղային գործունեության քաղաքականության և մեթոդաբանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ **23-32.27-Մ2-4**):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մ.Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման հետ կապված աշխատանքները.
2. իրականացնում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման հետ կապված աշխատանքները.
3. իրականացնում է այլ երկրներում խաղային բնագավառը կարգավորող պետական մարմինների հետ համագործակցությունը.
4. իրականացնում է խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման աշխատանքները.

5. իրականացնում է վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատան գործունեություն իրականացնող կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների հետ գործնական կապերի հաստատման աշխատանքները.
6. իրականացնում է միջազգային, Եվրոպական Միության և Եվրասիական Տնտեսական Միության անդամ երկրներում խաղային բնագավառում գործող համաձայնագրերին և ասոցիացիաներին անդամակցությանն ուղղված աշխատանքները.
7. իրականացնում է Նախարարությանը վերապահված խաղային բնագավառի լիցենզավորման գործընթացի իրականացման հետ կապված հարաբերությունների քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքները.
8. իրականացնում է համակարգային զարգացման հիմնական միտումների և հիմնախնդիրների ամփոփ վերլուծության՝ այդ թվում համակարգային հիմնախնդիրների բացահայտման, վերջիններիս վերացման, ինչպես նաև համակարգի զարգացմանը խթանող առաջարկությունների և միջոցառումների մշակման աշխատանքները:
9. իրականցնում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և ուսումնասիրության աշխատանքները.
10. իրականացնում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի նախապատրաստման, կազմակերպման, դրանից և հանձնաժողովի եզրակացություններից բխող գործառույթների իրականացման, հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակման աշխատանքները:

Իրավունքները

- Նախարարության կառուցվածքային այլ ստորաբաժանումներից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր.
- այլ նախարարությունների և գերատեսչությունների, պետական և ոչ պետական այլ մարմինների հետ համատեղ մասնակցել խաղային բնագավառին առնչվող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ աշխատանքային քննարկումներին.
- համապատասխան մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր.
- տարբեր աղբյուրներից ստանալ խաղային բնագավառին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն.

- խաղային բնագավառին առնչվող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման համար համապատասխան մարմիններից, պաշտոնատար անձանցից սահմանված կարգով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- մասնակցել համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների մասնակցությամբ խորհրդակցություններին:

Պարտականությունները

- ուսումնասիրել ոլորտը կարգավորող իրավական ակտերը և ներկայացնել համապատասխան մասնագիտական առաջարկություններ Բաժնի պետին.
- Բաժնի պետին ներկայացնել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, եզրակացություններ, ինչպես նաև մեթոդական պարզաբանումներ.
- Բաժնի պետին ներկայացնել իրավական ակտերի նախագծերը՝ հանրային քննարկման ներկայացնելու համար.
- Բաժնի պետին ներկայացնել իրավական ակտերի նախագծերը՝ կարգավորման ազդեցության գնահատման համար համապատասխան մարմիններ ներկայացնելու համար.
- նախապատրաստել օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի փաթեթներ իրավական ակտերի նախագծերը պետական-իրավական փորձաքննության ներկայացնելու համար.
- ուսումնասիրել միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող ոլորտը կարգավորող իրավական ակտերը և ներկայացնել համապատասխան մասնագիտական առաջարկություններ.
- ուսումնասիրել այլ մարմինների կողմից մշակված իրավական ակտերը և ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ.
- իրականացնել շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման, ինչպես նաև խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման աշխատանքներ.
- ուսումնասիրել համակարգային զարգացման հիմնական միտումների և հիմնախնդիրները և ներկայացնել ամփոփ վերլուծություններ՝ այդ թվում համակարգային հիմնախնդիրների բացահայտման, վերջիններիս վերացման վերաբերյալ.
- նախապատրաստել համակարգի զարգացմանը խթանող առաջարկություններ և իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ.
- ուսումնասիրել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը և ներկայացնել Բաժնի պետին.

- նախապատրաստել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները և իրականացնել հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակման աշխատանքները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության, կամ ֆինանսավարկային, կամ իրավունքի, կամ լիցենզավորման ենթակա գործունեության բնագավառներում երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

- Ծրագրերի մշակում
- Խնդրի լուծում
- Հաշվետվությունների մշակում
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

- Բանակցությունների վարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Ծառայությունների մատուցում
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: